

---

---

## ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՐԱՏԱՊ ՀԱՐՅԵՐ

ԽԱՉԱՏՈՒԻՅԱՆ Ա. Մ.

Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության շինարարության ներկա փուլի խնդիրները մեծապես պայմանավորում են պետական ծառայության համակարգում ընդհանրապես և իրավապահ մարմիններում մասնավորապես ծառայության անցման կարգին ու պայմաններին առնչվող հարաբերությունների իրավական կանոնակարգման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում առանձնակի կարևորվում է դատախազության մարմիններում ծառայության անցնելու հետ կապված հարցերի համալիր իրավական կարգավորումը:

Հանրային ծառայության համակարգում պետական ծառայության դերի ու նշանակության և դրա իրականացման անհրաժեշտ օրենսդրական հիմքերի ամրագրման նպատակով վերջին տարիներին հանրապետությունում ընդունվել են մի շարք օրենքներ և այլ իրավական ակտեր: Դրանց թվում են «Դիվանագիտական ծառայության մասին» (2001 թ. հոկտեմբերի 24), «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» (2002 թ. դեկտեմբերի 4), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (2002 թ. հուլիսի 3), «Ոստիկանությունում ծառայության մասին» (2002 թ. հուլիսի 3), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (2003 թ. ապրիլի 11), «Մաքսային ծառայության մասին» (2002 թ. հուլիսի 3), «Հարկային ծառայության մասին» (2002 թ. հուլիսի 3), «Քրեակատարողական ծառայության մասին» (2004 թ. դեկտեմբերի 24), «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (2004 թ. փետրվարի 18)<sup>1</sup> և այլ օրենքներ:

ՀՀ դատախազությունն իր սահմանադրաիրավական կարգավիճակի և լիազորությունների առանձնահատկությունների ուժով հանդես է գալիս որպես երկրում օրինականության ապահովման ու իրավակարգի ամրապնդման հիմնական երաշխավորներից մեկը: Իրավական պետության կառուցման և Եվրոպայի խորհրդին հանրապետության անդամակցության հետ կապված՝ հանրապետության դատախազության մարմիններում պետական ծառայության համակարգի վերափոխումների իրականացումը ձեռք է բերում ընդգծված կարևորություն:

«Քաղաքացիական ծառայության մասին» 2001 թ. դեկտեմբերի 27-ի ՀՀ օրենքի 1-ին հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ պետական ծառայությունը «մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառնությունների իրականացմանը»:

Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դատական ծառայությունը, հատուկ ծառայությունները՝ պաշտպանության,

---

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Ե., 2001, N 39, Ե., 2002, N 26, 32, 33, Ե., 2003, N 1, 28, Ե., 2004, N 18, Ե., 2005, N 8:

ազգային անվտանգության, ոստիկանության, հարկային, մաքսային, արտակարգ իրավիճակների հանրապետական գործադիր մարմիններում, ինչպես նաև դիվանագիտական և օրենքներով նախատեսված այլ ծառայությունները<sup>2</sup>»: Նկատի ունենալով, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի երկրորդ մասին համապատասխան դատախազական գործունեությունը «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով կարգավորվող պետական գործունեության ինքնուրույն տեսակ է»<sup>3</sup>, դատախազության մարմիններում ծառայությունը հանրապետությունում պետական ծառայության տեսակներից է:

Դատախազությունում պետական ծառայության անցման կարգը, պայմաններն ու առանձնահատկությունները ենթակա են պատշաճ օրենսդրական կանոնակարգման: Կարծում ենք, որ այդ կապակցությամբ բացակայում է հատուկ օրենք մշակելու ու ընդունելու անհրաժեշտությունը, և միանգամայն բավարար է այդ հարցերին առնչվող հարաբերությունների օրենսդրական ամրագրումը՝ «Դատախազության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում:

ՀՀ դատախազությունում պետական ծառայության անցմանն առնչվող հարաբերությունների օրենսդրական կարգավորումը ենթադրում է «Դատախազության մասին» գործող օրենքում այնպիսի փոփոխությունների և լրացումների կատարում, որոնք կսահմանեն դատախազության համակարգի պետական ծառայողների իրավական կարգավիճակին ներկայացվող միասնական պահանջները, դատախազության ծառայողների ընտրության, տեղաբաշխման և արդյունավետ օգտագործման, նրանց մասնագիտական պատրաստվածության և գործնական որակավորման բարձրացման չափանիշները, նյութական, սոցիալական ու իրավական ապահովվածության երաշխիքները:

Օրենքի շրջանակներում առաջին հերթին հատուկ կանոնակարգման է ենթակա դատախազությունում ծառայության հասկացությունը: Նկատի ունենալով, որ դատախազությունում ծառայությունը պետական ծառայության ինքնուրույն տեսակ է, այն կարող է սահմանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ դատախազությանը վերապահված լիազորությունների իրականացում, որն ուղղված է օրենքով դատախազության վրա դրված խնդիրների իրագործմանը: Դատախազության ծառայողը պետք է զբաղեցնի օրենքով նախատեսված դատախազության որևէ պաշտոն և հանդիսանա պետական ծառայող: Դատախազության ծառայողների աշխատանքային հարաբերությունները, եթե «Դատախազության մասին» ՀՀ օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն, կարգավորման են ենթակա ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ:

Օրենքով կարգավորման կարիք ունեն դատախազությունում ծառայողական ենթակայությանը վերաբերող հարաբերությունները: Հայտնի է, որ դատախազությունում ծառայությունը հիմնված է աստիճանակարգված ենթակայության սկզբունքի վրա: Ընդ որում, ՀՀ գլխավոր դատախազը վերադաս է դատա-

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, Ե., 2002, N 1:

<sup>3</sup> «Դատախազության մասին» ՀՀ օրենքը (Օրենսդրությունը դատական համակարգում. Պաշտոնական վերահրատարակություն, Ե., 2004, էջ 47-64):

խագույթյան բոլոր ծառայողների նկատմամբ: ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը վերադաս է գլխավոր դատախազության, Երևան քաղաքի, մարզերի և Երևան քաղաքի համայնքների դատախազության ծառայողների, իսկ ՀՀ զինվորական դատախազը՝ ՀՀ զինվորական դատախազության և կայազորների զինվորական դատախազությունների ծառայողների նկատմամբ: Օրենքով ամրագրման է ենթակա նաև Երևան քաղաքի դատախազի վերադասությունը Երևան քաղաքի դատախազության ու համայնքների դատախազությունների ծառայողների նկատմամբ:

Օրենքի շրջանակներում հատուկ կանոնակարգման կարիք ունի այն հարցը, թե ինչ է ենթադրում ստորադաս դատախազի ենթարկվելը վերադաս դատախազին: Ամենից առաջ նման ենթակայությունը պետք է ենթադրի դատախազության կազմակերպման և գործունեության հարցերով վերադաս դատախազի կողմից ստորադաս դատախազին տրված օրինական ցուցումների պարտադրականություն: Բացի այդ, վերադաս դատախազը, անհրաժեշտության դեպքում, իր առանձին լիազորությունների իրականացումը կարող է հանձնարարել ստորադաս դատախազին, վերացնել կամ փոփոխություններ կատարել նրա ընդունած որոշումներում, քննարկել նրա որոշումների և գործողությունների (անգործության) դեմ բերված բողոքները, նրանից պահանջել իր գործունեության մասին հաշվետվությունների, տեղեկատվության, այլ փաստաթղթերի տրամադրում և այլն:

Միաժամանակ, օրենքով ամրագրման է ենթակա այն կարևոր դրույթը, որի համաձայն՝ դատախազության ծառայողին չեն կարող տրվել այնպիսի ցուցումներ ու հանձնարարություններ, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին կամ դուրս են ցուցումներ տվողի և կատարողի լիազորությունների շրջանակներից:

Իրավակարգի պաշտպանությունն իրականացնող պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագրքի (ընդունվել է Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թ. դեկտեմբերի 17-ին)<sup>4</sup> և ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման ու իրավախախտների նրկատմամբ վերաբերմունքի հարցերով ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի բանաձևի (1990 թ.) դրույթներին համապատասխան՝ պետությունների կառավարություններն ու իրավապահ մարմինները պարտավոր են հոգ տանել, որպեսզի բոլոր այն պաշտոնատար անձինք, որոնց պարտականությունների մեջ է մտնում իրավակարգի պաշտպանությունը, ընտրվեն և նշանակվեն պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ, իրենց գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար օժտված լինեն համապատասխան բարոյական, հոգեբանական ու ֆիզիկական տվյալներով և անցնեն անընդմեջ ու մանրակրկիտ մասնագիտական պատրաստություն:

Համանման չափորոշիչների կիրառումը հավասարապես վերաբերելի է նաև դատախազության մարմինների ծառայողներին: Գտնում ենք, որ հանրապետության դատախազության համակարգում ծառայություն անցնելուն հավակնող հանրապետության քաղաքացիներին ներկայացվող հիմնական պա-

<sup>4</sup> *Сборник международных договоров, т. 1 (часть первая), ООН, Нью-Йорк - Женева, 1994, с. 358-364.*

հանջների թվին պետք է դասել բարձրագույն իրավաբանական կրթությունը, կոնկրետ պաշտոնում նշանակվելու համար օրենքով սահմանված աշխատանքային ստաժի առկայությունը, հայերենի պատշաճ իմացությունը, համապատասխան բժշկական եզրակացությամբ հաստատված դատախազության ծառայողի պարտականությունները կատարելու համար առողջական բավարար վիճակը:

Ոչ պակաս կարևոր պահանջ պետք է դիտել նաև դատախազության ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ մասնագիտական և բարոյական որակների առկայությունը: Այս պահանջը գնահատելիս հարկ է նկատի ունենալ, որ մասնագիտական որակները մասնավորապես ներառում են անձի պատրաստվածությունն իրավաբանի մասնագիտական գործունեությանը՝ «իրավագիտություն» մասնագիտության գծով բարձրագույն պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ծառայության պաշտոնի բերումով պարտականությունների հաջող կատարման համար անհրաժեշտ ընդհանուր և հատուկ գիտելիքների առկայությունը, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու հմտությունը, սկզբունքայնությունը, նախաձեռնողականությունը, կազմակերպական ունակությունները, աշխատունակությունը, հարցեր առաջադրելու և դրանք լուծելու կարողությունը:

Բարոյական որակների թվին կարելի է դասել օբյեկտիվությունը, իր և ուրիշների նկատմամբ պահանջկոտությունը, բարեխղճությունը, ազնվությունը, քաղաքացիական արիությունը, պատասխանատվությունը, հավասարակշռվածությունը, համեստությունը, նրբանկատությունը, բարոյական մաքրությունը:

Օրենքում միաժամանակ պետք է ամրագրվեն դատախազության համակարգում պաշտոն զբաղեցնելու իրավունք չտվող հանգամանքներն ու հիմքերը: Դրանց թվին կարելի է դասել մասնավորապես դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը, դատական կարգով համապատասխան պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը, հանցագործության համար դատապարտված լինելը (եթե դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ) և այլն:

Դատախազությունում պետական ծառայությանն առնչվող խնդիրների մեջ կարևորվում են նաև դատախազության ծառայողների իրավունքներն ու պարտականությունները, ուստի դրանց շրջանակի ամրագրումը ևս պետք է տեղ գտնի օրենքում կատարվելիք փոփոխությունների կազմում:

Դատախազության ծառայողները պետք է իրավունք ունենան իրենց իրավասության սահմաններում քննարկելու հարցեր և ընդունելու որոշումներ, մասնագիտական որակավորմանը և փորձին համապատասխան ծառայողական առաջխաղացման, օրենքով սահմանված և երաշխավորված վարձատրության, հավելավճարներ և օրենքով սահմանված այլ վճարներ ստանալու, իրավական պաշտպանության և սոցիալական ապահովության, դատական կարգով իրենց իրավունքների պաշտպանության և այլն:

Դատախազության ծառայողները պետք է պարտավոր լինեն, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, կատարել իրենց ծա-

ռայոդական պարտականությունները, հոգ տանեն իրենց մասնագիտական որակավորման և գործնական հմտությունների մշտական կատարելագործման ուղղությամբ, ապահովեն վերադաս դատախազների օրինական ցուցումների կատարումը, պահպանեն դատախազության ծառայողի մասնագիտական վարքագծի կանոնները, պետական և ծառայողական գաղտնիքը և այլն:

Օրենքով պետք է կանոնակարգվեն նաև դատախազության ծառայողների նկատմամբ կիրառվող սահմանափակումները: Նրանք պետք է զրբկված լինեն այլ վճարովի աշխատանք կատարելուց, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, որևէ կուսակցության անդամ լինելու կամ քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրավունքից: Համապատասխան պաշտոնի նշանակվելուց հետո նրանք պետք է առևտրային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամում իրենց ունեցած բաժնեմասը հանձնեն հավատարմագրային կառավարման՝ պահպանելով հավատարմագրային կառավարման հանձնված գույքից եկամուտներ ստանալու իրավունքը:

Օրենքով պետք է սահմանվեն նաև դատախազության ծառայողների վերապատրաստման, նրանց իրավական պաշտպանության ու սոցիալական ապահովության, ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու համար խրախուսելու և օրենքով սահմանված դեպքերում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն ու կարգը: Օրենքը պետք է հստակ կարգավորի նաև դատախազության ծառայողների լիազորությունները կասեցնելու և նրանց պաշտոնից ազատելու հիմքերը: Դատախազության ծառայողների լիազորությունները կասեցնելու հիմքեր կարող են լինել նրանց նկատմամբ քրեական գործի հարուցումը՝ մինչև վերջնական որոշում ընդունելը, այնպիսի հիվանդության առկայությունը, որը հնարավորություն չի տալիս պատշաճ կատարելու ծառայողական պարտականությունները՝ մինչև աշխատունակության կորստի մասին որոշում ընդունելը, այնպիսի անվայել արարքը, որը կարող է պաշտոնից ազատելու հիմք ծառայել՝ մինչև տվյալ հարցով վերջնական որոշում ընդունելը, պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում որպես թեկնածու առաջադրվելը:

Դատախազության ծառայողին պաշտոնից ազատելու հնարավոր հիմքեր կարող են լինել անձնական դիմումը, դատախազության պաշտոն զբաղեցնելու՝ օրենքով սահմանված տարիքը լրանալը, դատախազության ծառայողի համար նախատեսված սահմանափակումները չպահպանելը, ծառայողական անհամապատասխանությունը, հաստիքների կրճատումը, ՀՀ քաղաքացիության դադարեցումը, դատախազության ծառայողի նկատմամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի կայացումը, դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը, դատական կարգով պետական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը և այլն:

Դատախազության ծառայողներին աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամանների կապակցությամբ օրենքով պետք է ամրագրվի դրանք

դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը: Ընդամին, դատախազության ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու հրամանն անօրինական ճանաչվելու դեպքում նա դատարանի համապատասխան վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պետք է անհապաղ վերականգնվի իր պաշտոնում և հարկադիր պարապուրդի դիմաց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով հատուցում ստանա:

Օրենքով կարգավորման են ենթակա նաև դատախազության ծառայողների վարձատրության, կենսաթոշակային ապահովության, այլ սոցիալական երաշխիքների, հանգստի, բնակարանային, տրանսպորտային ապահովմանն առնչվող և հարակից ուրիշ հարցեր: Մասնավորապես, օրենքով պետք է ամրագրվի դատախազության յուրաքանչյուր ծառայողի համար աշխատանքի դիմաց համարժեք վարձատրություն ստանալու իրավունքը՝ պահպանելով հավասարակշռությունը հավասարազոր պաշտոններ զբաղեցնող դատախազների և դատավորների վարձատրությունների միջև՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թ. հոկտեմբերի 6-ի թիվ R/2000/19 հանձնարարականի դրույթներին համապատասխան<sup>5</sup>:

ՀՀ դատախազությունում ծառայության անցման կարգին ու պայմաններին առնչվող հարաբերությունների օրենսդրական կանոնակարգումը դատախազության ծառայողների առջև դրված խնդիրների բարեհաջող լուծումն ապահովելու կարևոր երաշխիք է: Դրա հետ մեկտեղ, ՀՀ դատախազությունում պետական ծառայության հաջողությունները մեծապես պայմանավորված են այդ պարտականությունները կատարող անձանց որակավորմամբ և պետության կողմից իրականացվող սոցիալ-իրավական պաշտպանվածությամբ:

## НЕКОТОРЫЕ АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ

ХАЧАТУРЯН А. М.

### Резюме

Актуальные аспекты прохождения государственной службы в органах прокуратуры республики подлежат четкому законодательному регулированию. Особенности и условия данного вида государственной службы должны быть урегулированы в рамках Закона РА “О прокуратуре”. Необходимо соблюдать надлежащие процедуры при подборе государственных служащих для органов прокуратуры. Законом должен быть регламентирован круг основных требований, предъявляемых к служащим органов прокуратуры.

Четкое законодательное регулирование порядка, особенностей и условий государственной службы в органах прокуратуры является важной гарантией

<sup>5</sup> Օրինականություն, 2002, և 20, էջ 12-39:

обеспечения успешного решения задач, стоящих перед Прокуратурой Республики Армения.